

ԿՈՄԻՏԱՍ-150

Այս տարի նշվում է մեծագույն երգահան Կոմիտասի ծննդյան 150-ամյակը: Այդ առթիվ հունիսի 7-ին, ժամը 15.00-ին Հայաստանի ազգային գրադարանում կկազմակերպվի հոբելյանական համերգ եւ գրականության ցուցադրություն:

Վարդապետի հոբելյանին նվիրած համերգային ծրագրին կմասնակցեն եւ Կոմիտասի ստեղծագործություններից կներկայացնեն երգիչ, երգահան Վահան Արծրունին, վաստակավոր արտիստ Սարգիս Նաջարյանը, «Գեղարդ» և «Նաիրյան» երգչախմբերը, մեներգիչներ Անդրանիկ Մալխասյանը, Անի Ղազարյանը և ուրիշներ:

Միջոցառման շրջանակում գրադարանի մեծ ցուցասրահում կկազմակերպվի գրականության ցուցադրություն, ներկայացված կլինի նաեւ Կոմիտասի նոտաների հավաքածուն: Մուտքն ազատ է: